ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0095,
Բաղրամյան պողոտա 19, Ազգային ժողով

17.06.2026

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Առաքելյան,

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի և Ազգային ժողովի աշխատակարգի 38-40-րդ կետերի համաձայն, կից ներկայացնում եմ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-1369-15.06.2026-ՏՀ-011/0) օրենքի նախագծի վերաբերյալ իմ առաջարկությունները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՀ ԱԺ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԲԱԲԿԵՆ ԹՈՒՆՅԱՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» (փաստաթղթային կոդ՝ Կ-1369-15.06.2026-ՏՀ-011/0) օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետի բ ենթակետով նախատեսվող՝ Օրենսգրքի 88-րդ հոդվածի 1-ին մասի նոր խմբագրությամբ շարադրվող աղյուսակի 10-րդ տողում «21000», «22500» և «24000» թվերը փոխարինել համապատասխանաբար «20200», «21100» և «21900» թվերով, 15-րդ տողում «5400», «7000» և «9100» թվերը փոխարինել համապատասխանաբար «4850», «5600» և «6600» թվերով, 16-րդ տողում «200», «250» և «300» թվերը փոխարինել համապատասխանաբար «125», «160» և «200» թվերով, 17-րդ տողում «3600» և «4600» թվերը փոխարինել համապատասխանաբար «3000» և «3250» թվերով:

Հիմնավորում

Կառավարության կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին Կ-1369-15.06.2026-ՏՀ-011/0 նախագծով առաջարկվում է վերանայել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ակցիզային հարկի դրույքաչափերը:

Հաշվի առնելով ծխախոտային ոլորտի ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքները հաշվի առնելով՝ կարծում ենք, որ կառավարության կողմից ծխախոտի եւ ծխախոտային արտադրանքի համար առաջիկա 2 տարիների համար առաջարկվող բարձրացումների չափերը վերանայման կարիք ունեն՝ նվազման ուղղությամբ:

Մասնավորապես, ավանդական ծխախոտի (ԱՏԳ 2402) դեպքում նախատեսվում է դրույքաչափի ամենամյա բարձրացում 7%-ով: Ես առաջարկում եմ դրույքաչափը բարձրացնել տարեկան մոտ 4%-ով, հաշվի առնելով այն հանգամանքները, որ 2026թ.գործող դրույքաչափերով Հայաստանը արդեն իսկ գրեթե հասել է ԵՏՄ ինդիկատիվ դրույքաչափին (2029թ.՝ 1000 հատի համար 45 եվրոյի չափով), արտադրատեսակների գների աճը եղել է չափավոր, իսկ դրույքաչափի կտրուկ բարձրացումը կարող է ավելացնել հարեւան երկրների ծխախոտի մաքսանենգ ճանապարհով ներկրման ռիսկերը եւ հանգեցնել հարկային մուտքերի նվազման:

Նույն պատճառներով, տաքացվող ծխախոտի (ԱՏԳ 2404 11) համար տարեկան 30% աճի փոխարեն առաջարկում ենք սահմանել 18%:

Նիկոտինային բարձիկները (Nicotine Pouches, ԱՏԳ 2404 91) ներկայումս չեն հարկվում: Կառավարությունն առաջարկում է առաջին տարում սահմանել 1 կգ համար 2,800 դրամ, այնուհետև՝ յուրաքանչյուր տարի բարձրացնել 30%-ով: Առաջարկում ենք տարեկան աճը սահմանել 8%, հաշվի առնելով, որ արտադրանքը նոր է տեղական շուկայի համար, ներմուծման և իրացման ծավալները չափազանց փոքր են՝ լրացուցիչ հարկային մուտքեր ապահովելու համար, և այնքան փոքր են, որ լրացուցիչ հարկային եկամուտների ակնկալիքներ գրեթե չկան, նաեւ առկա է 12% ներմուծման հարկ, քանի որ տվյալ արտադրանքը ներմուծվում է հիմնականում ԵՄ երկրներից:

Էլեկտրոնային ծխախոտի համար (ԱՏԳ 2404 12; 2404 19)՝ կառավարությունը առաջարկում է դրույքաչափը բարձրացնել տարեկան 100%-ով, այնուհետև՝ հաջորդող 2 տարիներին 25 և 20 տոկոսներով: Առաջարկում եմ առաջին տարում կտրուկ 100%-անոց բարձրացման փոխարեն՝ ավելի սահուն, հավասարաչափ ավելացում, քանի որ դրույքաչափերի կտրուկ բարձրացումը հենց առաջին տարում շուկայում խթանելու է առավել ցածրորակ արտադրատեսակների ներմուծումը եւ իրացումը:

1. Անվանական ծխախոտ (ԱՏԳ 2402) 2026թ բազային դրույքաչափ՝ 19500 դրամ, առաջարկվում է տարեկան 4 % աճ: Օրենսգրքի 88 -րդ հոդվածի նոր աղյուսակի 10-րդ տող

1-ին տարի՝ 20280 դրամ -20200 դրամ (փաստացի աճ՝ 3,59%)

2-րդ տարի՝21091 դրամ-21 100 դրամ (փաստացի աճ՝ 4,45%)

3-րդ տարի՝ 21934 դրամ-21900 դրամ (փաստացի աճ՝ 3,79%)

2.Տաքացվող ծխախոտ (ԱՏԳ 2404 11 000) 2026թ բազային դրույքաչափ՝ 4150 դրամ, առաջարկվում է տարեկան 17 % աճ: Օրենսգրքի 88 -րդ հոդվածի նոր աղյուսակի 15-րդ տող

1-ին տարի՝ 4855 դրամ- 4850 դրամ (փաստացի աճ՝ 16,9 %)

2-րդ տարի՝ 5681 դրամ -5600 դրամ (փաստացի աճ՝ 15,46 %)

3-րդ տարի՝ 6641 դրամ -6600 դրամ (փաստացի աճ՝ 17,86 %)

3. Էլեկտրոնային ծխախոտ (ԱՏԳ 2402 12, ԱՏԳ 240419) 2026թ բազային դրույքաչափ 100 դրամ, առաջարկվում է տարկան 25 % աճ: Օրենսգրքի 88 -րդ հոդվածի նոր աղյուսակի 16-րդ տող

1-ին տարի՝ 125 դրամ (փաստացի աճ՝ 25 %)

2-րդ տարի՝ 156 դրամ-160 դրամ (փաստացի աճ՝ 28 %)

3-րդ տարի՝ 195 դրամ-200 դրամ (փաստացի աճ՝ 25 %)

4.Նիկոտինային բարձիկ (ԱՏԳ 2404 91 000) ներկայումս չի հարկվում, եթե հիմք ընդունել նախագծով 2027 թ համար առաջարկով 2800 դրամը որպես բազային դրույքաչափ, ապա տարկան 8 % աճի դեպքում՝ Օրենսգրքի 88 -րդ հոդվածի նոր աղյուսակի 17-րդ տող

1-ին տարի՝ 2800 դրամ -

2-րդ տարի՝ 3024 դրամ-3000 դրամ (փաստացի աճ՝ 7,14 %)

3-րդ տարի՝ 3265 դրամ-3250 դրամ (փաստացի աճ՝ 8,33 %)